Հաստատված է

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի

խորհրդի

__ նիստում

“____”_____2021 թ.

_____

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2021

I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

| Թվարկել և վերլուծել Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր առաքելության և ռազմավարական պլանին համապատասխան: |
|---|
| Հաշվետու տարում պատմության և հասարակագիտության ֆակուլտետի գործունեությունն իրականացվել է ֆակուլտետի 2021-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանին համապատասխան: |

II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

| Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ ըստ Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում շրջափուլի: Խոսել ուսանողների, դասախոսների, գործատուների մասնակցության մասին: |
|---|
| Ֆակուլտետի մեջ ներառված են երեք մասնագիտական ամբիոններ՝ Հայոց պատմության, Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի, Հասարակագիտության: Ընթացիկ տարում ֆակուլտետում չեն կատարվել կառուցվածքային փոփոխություններ:<br><br>Ֆակուլտետի երեք ամբիոններում աշխատում են 35 մասնագետներ, որից համատեղության կարգով՝ 7 դասախոս: Ֆակուլտետի վարչական աշխատանքները համակարգվում են դեկանատի կողմից: Ֆակուլտետն ընդհանուր առմամբ ունի անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսները արդյունավետ ուսումնական գործընթաց կազմակերպելու ուղղությամբ:<br><br>Հաշվետու տարում ֆակուլտետի կառավարումն իրականացվել է ՀՀ օրենսդրության, Համալսարանի կանոնադրության և ֆակուլտետի կանոնադրության համաձայն:<br><br>Հաշվետու տարում ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանին համաձայն տեղի է ունեցել 9 նիստ, որի ընթացքում քննարկվել են օրակարգային և ընթացիկ հարցեր, կայացվել են համապատասխան որոշումներ /Տե՛ս ֆակուլտետի խորհրդի նիստերի արձանագրություններ/:<br><br>Ֆակուլտետի խորհուրդը ընթացիկ տարում կազմված է եղել 27 անդամներից, որտեղ բացի ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները ընդգրկված են եղել ուսանողներ, որոնք կազմում են խորհրդի անդամների ընդհանուր թվի 25 տոկոսը: Ընթացիկ տարում ֆակուլտետի խորհրդում ընգրկված են եղել ութ ուսանողներ, այդ թվում ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության նախագահները: Սրանով ֆակուլտետի ուսանողությանը հնարավորություն է ընձեռվել մասնակցելու ֆակուլտետի կառավարման և որոշումների կայացման աշխատանքներին:<br><br>Ֆակուլտետի ամբիոնների ներկայացուցիչների համամասնական ներկայացվածությունը ֆակուլտետի խորհրդի աշխատանքներին հնարավորություն է տվել դասախոսական կազմին մասնակցել ֆակուլտետի որոշումների կայացման գործընթացին:<br><br>Հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել է նաև ընդլայնված կազմով խորհրդի նիստ, որին մասնակցելու հրավեր են ստացել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի բոլոր ներկայացուցիչները:<br><br>Պարբերաբար կազմակերպվել են նաև դեկանատի նիստեր, որտեղ քննարկվել են ընթացիկ |

| |
|---|
| հարցեր և կայացվել որոշումներ:<br><br>Հաշվետու տարում ֆակուլտետում աշխատանքների պլանավորումն իրականացվել է ուսումնական պլանների, ֆակուլտետի խորհրդի աշխատանքային ծրագրի և ֆակուլտետի ռազմավարության հիման վրա նախատեսված առաջնահերթություններով:<br><br>Ֆակուլտետի դեկանատի և ամբիոնների կողմից կատարվել են ընթացիկ տարվա գործունեության, ուսումնական գործընթացի մշտադիտարկում:<br><br>Ամբիոնների վարիչների կողմից նախատեսված ծանրաբեռնվածության համապատասխան իրականացվել են դասալսումներ: Արձանագրվել են առկա խնդիրը, որոնք քննարկվել են ամբիոնի նիստերում, տրվել են առանձին հանձնարարականներ:<br><br>Ամբիոնների կողմից իրականացվել է նաև մշտադիտարկում Google classroom հարթակում՝ համաձայն ռեկտորի համապատասխան հրամանի, որի արդյունքները ներկայացվել են ռեկտորատ:<br><br>2021թ. նոյեմբերից ֆակուլտետում փաստաթղթաշրջանառությունը իրակնացվում է Mulberry համակարգի միջոցով, որը էականորեն հեշտացրել է աշխատանքների կազմակերպումը և դրանց ընթացքի վերահսկողությունը: |

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

| |
|---|
| Վերլուծել ֆակուլտետում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին: |
| Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է կրթական ծրագրերի բարելավման աշխատանքներ: Ֆակուլտետի ամբիոններում քննարկվել և վերլուծվել են ուսումնառության մեթոդները: Ամբիոններին առաջարկվել է քննարկել ու հարկ եղած դեքպում վերանայել մասնագիտական առարկաների ծրագրերը՝ համապատասխանեցնելով կրթական ծրագրի վերջնարդյունքներին: |
| Վերլուծել ֆակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում/ամբիոններում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: |
| Ֆակուլտետում գործում է ուսանողների գնահատման 100 միավորանոց համակարգը: Ֆակուլտետում և մասնագիտական ամբիոններում վերլուծվել է սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, որը կապահովի ակադեմիական ազնվությունը: Ուսանողության շրջանում գրագողության հնարավոր դեպքերի կանխարգելման և ակադեմիական ազնվությունը ապահովելու նպատակով բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողներից պահանջվում է ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների էլեկտրոնային տարբերակները: Ստեղծված բազայի միջոցով հնարավորություն է ստեղծվում հնրարավորինս կանխել նույնաբովանդակ թեմաների շրջանառությունները ուսանողների շրջանում: |
| Ֆակուլտետի աշխատանքները ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ: |

Պայմանավորված Կովիդ համավարակով ընթացիկ տարում ուսանողների և դասավանդողների ակադեմիական շարժունակությունը որոշակիորեն նվազել է: Սակայն այնուամենայնիվ որոշակի շարժունակություն իրականացվել է:

Ֆակուլտետի Հայոց պատմության 3 դասախոսներ Էրազմուս պլյուս ծրագրի շրջանակներում դասավանդել են Բուդապեշտի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի հայագիտության ամբիոնում: Էրազմուս կրեդիտային շարժունության ծրագրի տրամադրած կրթաթոշակի միջոցներով ֆակուլտետի 1 ուսանող (առկա ուսուցման բակալավրիատի հասարակագիտության բաժնից) մեկ կիսամյակ ուսանել է Մեծ Բրիտանիայի Կիլի համալսարանում, իսկ 4 ուսանող (1-ը առկա ուսուցման բակալավրիատի հասարակագիտության բաժնից և 3-ը առկա ուսուցման բակալավրիատի պատմության բաժնից) քննությունները հանձնել են և հաջորդ կիսամյակ ուսանելու են Կիլի համալսարանում:

## IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

| | | |
|---|---|---|
| Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները: | | |
| Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:<br><br>Ֆակուլտետում ուսանում է 355 ուսանող, որից պատմության մասնագիտության գծով՝ 253 ուսանող, հասարակագիտության մասնագիտության գծով՝ 83 ուսանող, իրավագիտություն մասնագիտության գծով՝ 18 ուսանող: | | |
| Բակալավրի | առկա | 157 |
| | հեռակա | 119 |
| Մագիստրոսի | առկա | 63 |
| | հեռակա | 16 |
| Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով | | |
| Ուսանողների արտահոսք | | |
| Հաստատություն/երկիր | | թիվ |
| 1 | Մեծ Բրիտանիայի Կիլի համալսարան /1 կիսամյակ փոխանակման ծրագրերի շրջանակներում սովորելու նպատակով/ | 1 |

| Հեռացումներ և վերականգնումներ | | տոկոս | թիվ |
|---|---|---|---|
| 1 | Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը | | 17 |
| 2 | Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը | | 22 |

Վերլուծել ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետությունը:

2021 թվականի ընթացքում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից կատարվել են ուսանողների հավաքագրման և ֆակուլտետի մասնագիտությունների և կրթական ծրագրերի վերաբերյալ իրազեկման ուղղությամբ հետևյալ աշխատանքները.

1. Կազմակերպվել են նաև իրազեկման այցեր երևանյան և մարզային թվով 9 դպրոցներ:

2. Ֆակուլտետ են այցելել Երևանի և մարզերի թվով 5 դպրոցների աշակերտներ, ովքեր ծանոթացել են մեր համալսարանում ուսման հնարավորությունների, հնարավորություն են ունեցել մասնակցելու դասապրոցեսին:
3. Ակտիվացվել են աշխատանքները համալսարանի հենակետային վարժարանի հումանիտար հոսքի աշակերտների հետ, վերջիններիս համար պարբերաբար կազմակերպվել են դասախոսություններ, այց թանգարաններ: Հենակետային վարժարանում իր գործունեությունն է շարունակել նաև Պատանի պատմաբանների ակումբը: Ակումբի գործունեությունը նպաստում է աշակերտների մասնագիտական կողմնորոշման հարցում և կարևոր գործիք է ֆակուլտետի մասնագիտացումների նկատմամբ հետաքրքրության մեծացման ուղղությամբ:
4. Այս ուսումնական տարում Հենակետային վարժարանում բացվել է պատմության հոսք: Ֆակուլտետի կողմից ակտիվ աշխատանքներ են տարվում այդ հուսքում ընդունված աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ:

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները:

Ֆակուլտետից ուսանողները հեռացվել են երկու պատճառով.

1. Ուսման վարձը չվճարելու
2. Անբավարար առաջադիմության
3. Սեփական դիմումի համաձայն
4. Որոշ ուսանողներ էլ ֆակուլտետից ազատվել են բանակ զորակոչվելու պատճառով

| Հաշետու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում: | | |
|---|---|---|
| Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը: | | |
| Բակալավր | | |
| Մագիստրոս | | |
| Ընդհանուր | | |
| Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը | | |
| | Գիտահետազոտական ծրագիր | ուսանողների թիվ |
| 1 | «Միսիոներական քարոզչությունը եվ հայ կաթոլիկ ու բողոքական հարանվանությունների գործունեությունն Արեվմտյան Հայաստանում եվ Կիլիկիայում 1896-1921թթ» գիտական ծրագրի ղեկավար՝ ավետիս հարությունյան | |
| 2 | «Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը և նրա հայապահպան գործունեությոնը 1914-1939թթ.» գիտական ծրագրի ղեկավար՝ ավետիս հարությունյան | |
| 3 | «Հայաստանը Անդրկովկասում եվրոպական երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների հետ փոխհարաբերությունների համատեքստում (1917-1920 թթ.)» ղեկավար՝ Վանիկ Վիրաբյան | |
| 4 | «Հայաստանը 1920-1991թթ.» գիտական բազային թեմա | 1 |

| Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը | | |
|---|---|---|
| | Տպագրված աշխատանք | ուսանողների թիվ |
| 1 | Պողոսյան Ս., Ղռմաջյան Հ., 1917 թվականի ռուսական հեղափոխությունները և հայկական հարցը, Լրատու, 2021, թիվ 1: | 1 |
| 2 | Պողոսյան Ս., Հախնազարյան Ժ., Հայաստանի դեմ 1920 թ. պատերազմի նախապատրաստումը քեմալականների կողմից, Լրատու, 2021, թիվ 2: | 1 |
| 3 | | |
| 4 | | |

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

| Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում և մասնագիտական որակների համապատասխանությունը ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին: |
|---|
| Ֆակուլտետը համալրված է անհարժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմով, ովքեր ապահովում են կրթական ծրագրերով նախատեսված նպատակների իրականացմանն ու կրթական վերջնաարդյունքների ձևավորմանը:<br><br>Ֆակուլտետի երեք ամբիոններում աշխատում են 35 մասնագետներ, որից համատեղության կարգով՝ 7 դասախոս:<br><br>Ըստ ամբիոնների.<br><br>**Հայոց պատմության ամբիոն**<br><br>*Աշխատում է 14 դասախոս, որից 2-ը համատեղող*<br><br>ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս -1<br><br>պրոֆեսոր – 6<br><br>դոկտոր-4<br><br>գիտությունների թեկնածու-8<br><br>դոցենտ – 7<br><br>**Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն**<br><br>***Աշխատում է 12 դասախոս, որից 4-ը համատեղող***<br><br>ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս- 1<br><br>պրոֆեսոր- 3<br><br>դոկտոր-4 |

գիտությունների թեկնածու-8

դոցենտ- 8

**Հասարակագիտության ամբիոն**

*Աշխատում է 11 դասախոս, որից 1-ը համատեղող*

Պրոֆեսոր – 3

դոկտոր-3

գիտությունների թեկնածու – 6

դոցենտ – 6

դասախոս – 2

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

| |
|---|
| Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն: |
| Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: |

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը ակտիվորեն մասնակցել է տարբեր գիտահետազոտական ծրագրերի, կոնֆերանսների, հրատարակել են հոդվածներ: 2021 թ. ֆակուլտետի երկու գիտական խումբ հաղթել է ԳՊԿ գիտական թեմատիկ խմբերի մրցույթում:

Գիտական թեմատիկ խմբերում ընդգրկված են ֆակուլտետի 10 դասախոսներ:

Ֆակուլտետի դասախոսների հետազոտությունների արդյունքում հրատարակվել են՝

30 գիտական հոդվածներ,

6 գիրք և մենագրություն,

1 մեթոդական ձեռնարկ
դասախոսները մասնակցել են 5 միջազգային, 8 Հայաստանյան գիտաժողովների:

| |
|---|
| Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ: |
| ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ |

| | Ամսագիրը (երկիրը) | Վարկանիշը | Հրապարակումների թիվ |
|---|---|---|---|
| 1 | “XIV Конгресс антропологов и этнологов России”, сборник материалов/ | | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | Москва-Томск | | |
| 2 | Сборник материалов Международного научно-практического Зорума (г. Пятигорск, 8 октября 2021 г.), Ставрополь, издательство СКФУ | | 1 |
| 3 | | | |
| 4 | | | |
| 5 | | | |
| Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը | | | |
| | Ամսագիրը (երկիրը) | Վարկանիշը | Հրապարակումների թիվ |
| 1 | Հայկազեան հայագիտական հանդէս/ Բեյրութ, Լիբանան | | 1 |
| 2 | “12th International Congress on the Archaeology of the Ancient Near East (12th ICAANE)” / Bologna, Italy | | 1 |
| 3 | “Identity, Diversity & Contact: From the Southern Balkans to Xinjiang, from the Upper Palaeolithic to Alexander”, in: ICE I, International Congress “The East”/ Turnhout, Belgium | | 1 |
| 4 | | | |
| 5 | | | |
| ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը | | | |
| | Ամսագիրը | Վարկանիշը | Հրապարակումների թիվ |
| 1 | Լրատու | | 5 |
| 2 | ՎԷՄ | | 4 |
| 3 | Էջմիածին | | 1 |
| 4 | Լրաբեր Հասարակական Գիտությունների | | 2 |
| 5 | Բանբեր Մատենադարանի | | 1 |
| 6 | Fundamental Armenology (Electronical Journal) | | 3 |
| 7 | «Պատմա-բանասիրական հանդես» | | 1 |
| 8 | Wisdom | | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 9 | «Հայաստանը 1945-1965թթ.» (գիտաժողովի զեկուցումների ժողովածու) | | 2 |
| 10 | «Փիլիսոփայությունը արդի աշխարհում» | | 1 |

Վերլուծել ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները հաշվետու տարում:

Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության վերլուծություն: Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումն արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ):

VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Վերլուծել առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝ լսարանների, լաբորատորիաների, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը:

2021 թվականին կարիքների վերհանման արդյունքում ֆակուլտետում ապահովվել է ուսումնական գործընթացի տեխնիկական ապահովում:

Ներկայում ֆակուլտետում գոյություն ունեն տեխնիկապես վերազինված 12 լսարաններ, որոնք հագեցված են ինտերակտիվ ուսուցում ապահովելու համար անհարժեշտ տեխնիկայով /հեռուստացույցներ, պրոյեկտորներ, համապատասխան համակարգիչներ/ և լիովին համապատասխանում են ֆակուլտետի առկա կարիքների բավարարմանը:

Խնդիրների վերհանման արդյունքում հաշվետու տարվա ընթացքում համալսարանի համակարգչային մասնագետների կողմից տեխնիկական և ծրագրային հետազոտման են ենթարկվել ֆակուլտետում առկա ողջ համակարգչային տեխնիկան, որն օգտագործվում է դասապրոցեսի ժամանակ: Այս ամենի արդյունքում նոր հակավիրուսային ծրագրերով են վերազինվել ֆակուլտետում առկա համակարգիչները, վերացվել են նաև տեխնիկական մի շարք խնդիրներ:

Ֆակուլտետը հագեցված է որակյալ ինտերնետային կապով: Ֆակուլտետում գործում է համալսարանի գրադարանի ընթերցասրահներից մեկը, որը հագեցած է համակարգիչներով և մասնագիտական գրականությամբ:

Ներկա դրությամբ ֆակուլտետի տեխնիկական հագեցվածությունը բավարարում է ֆակուլտետի շահակիցների՝ պրոֆեսորադասախոսական կազմ, վարչական ապարատ և ուսանողներ,

| |
|---|
| կարիքները: |

VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

| |
|---|
| Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ: |
| Ֆակուլտետի գործունեության հիմնական ընթացքը լուսաբանվել է համալսարանի կայքէջի համապատասխան բաժիններում: Ֆակուլտետի ուսանողները և շահագրգիռ շրջանակները առցանց , բանավոր և տարբեր հայտարարությունների միջոցով պարբերաբար տեղեկացվել են ուսումնական գործընթացի, ֆակուլտետի գործունեության մասին: Հաշվետու տարվա ընթացքում Հաջողության բանաձև հաղորդման շրջանակներում պատրաստվել է մեկ հաղորդում՝ նվիրված ֆակուլտետում առկա մասնագիտություններին: Ֆակուլտետի գործունեությունը ներկայացվել են նաև հեռուստատեսային և ռադիո տարբեր այլ հաղոդումներում:<br><br>Ֆակուլտետի գործունեությունը և շփումը շահագրգիռ շրջանակների հետ ապահովվել է նաև ֆակուլտետի և ուսանողական խորհրդի ֆեյսբուքյան էջերի միջոցով: |

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

| |
|---|
| Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում: |
| Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը: |
| 2021 թվականի ֆակուլտետում իրականացվել են մի շարք աշխատանքներ միջազգայնացման և արտասահմանյան գիտակրթական հաստատությունների հետ հետագա համագործակցության ընդլայնման ուղղությամբ:<br><br>Հաշվետու տարվա ընթացքում ֆակուլտետի կողմից աշխատանքներ են տարվել նաև եվրոպական մի շարք այլ համալսարանների հետ կապեր հաստատելու և հետագա համագործակցության հնարավորությունները դիտարկելու ուղղությամբ: Մասնավորապես նշված ուղղությամբ նախնական աշխատանքներ են իրականացվում Ռումինիայի Կլուժի համալսարանի, Վարշավայի համալսարանի, Իսպանիայի Կորոլայի համալսարանի, ԱՄՆ Կալիֆորնիայի համալսարանի հայագիտության ամբիոնի:<br><br>Խորացվել են հարաբերությունները Բուդապեշտ Պիտեր պազմանի կաթոլիկ համալսարանի, մեծ Բրիտանիայի Կիլի համալսարանի հետ:<br><br>Նոր հարաբերություններ են հաստատվել և համագործակցության վերաբերյալ հուշագրեր են ստորագրվել Բեյրութի Հայկազյան համալսարանի, ՌԴ Ուրալի դաշնային համալսարանի հետ: |

Ֆակուլտետի խորհրդի որոշմամբ պատմության մասնագիտության առկա մագիստրական կրթական ծարգիրը պատրաստվել են անգլերեն լեզվով դասավանդելու համար:

Անգլերեն լեզվով դասվանդելու կարողություններ ունեցող դասախոսներն են՝ ըստ ամբիոնների.

***Հայոց պատմության ամբիոն***

| | Դասախոսներ | Դասընթացներ |
|---|---|---|
| 1 | **Աշոտ Փիլիպոսյան**<br>*( պ.գ.դ., պրոֆեսոր)* | *Հնագիտություն* |
| 2 | **Էդգար Հովհաննիսյան**<br>(պ.գ.թ., դոցենտ) | *1. Հայկական հոգևոր-կրոնական կազմակերպությունները*<br>*2. Հայկական Սփյուռք: կազմավորումը, կառուցվածքն ու արդի հիմնախնդիրները* |
| 3 | **Սամվել Պողոսյան** (պ.գ.դ., պրոֆ.) | *1. Հայոց Ցեղասպանություն: Պատճառները, ընթացքը և հետևանքները*<br>*2.Հայկական հարց և միջազգային դիվանագիտություն* |
| 4 | **Խաչատուր Ստեփանյան**<br>( պ.գ.դ., պրոֆեսոր ) | *1. Կովկասի և Հայաստանի խորհրդայնացումը*<br>*2. Հայկական ազգային ազատագրական շարժումը 19-րդ դարի վերջին-20-րդ դարի սկզբին* |
| 5 | ***Սուսաննա Խաչատրյան***<br>*( պ.գ.թ., դոցենտ)* | *Հայկական մշակույթ և արվեստ* |

*Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն*

| *Դասախոս* | *Գիտ. աստիճան* | *Թեմա* |
|---|---|---|
| *1. Ռուբեն Սաֆրաստյան* | *պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս* | *1. Թուրքիայի պետության կազմավորման մեխանիզմները*<br>*2. Ցեղասպանությունները և արդի միջազգային կազմակերպությունները* |
| *2. Արամ Քոսյան* | *պ.գ.դ., պրոֆ.* | *1. Հայկական քաղաքակրթությունը*<br>*2. Հին աշխարհի և միջին դարերի պատմության հիմնախնդիրներ*<br>*3. Շրջակա միջավայրը և քաղաքակրթական գործընթացները* |
| *3. Երվանդ Գրեկյան* | *պ.գ.դ., դոցենտ* | *Հայկական լեռնաշխարհի պատմությունը և մշակույթը Հին Մերձավոր արևելքի համատեքստում* |
| *4. Միքայել Բաղալյան* | *պ.գ.թ.* | *1. Հայաստանի հնագիտություն*<br>*2. Պաշտամունքը և հավատը նախաքրիստոնեական Հայաստանում*<br>*3. Հին Մերձավոր Արևելքի հնագիտությունը* |

*Իրավագիտության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն*

| | *Անուն, ազգանուն* | | *Դասընթաց* |
|---|---|---|---|
| *1.* | *Սանուկյան Սահակ* | *Հ.գ.թ., դոցենտ* | *1. Վարչական իրավունք Հանրային ծառայությունների իրավական կարգավորումը* |
| *2.* | *Փխրիկյան Ալինա* | *Հ.գ.թ., դոցենտ* | *1. Պետության և իրավունքի տեսություն Սահմանադրական իրավունք* |

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքները, ֆակուլտետի տարեկան գործողությունների ծրագիրը, դրանց արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:

Հաշվետու տարվա ընթացքում ֆակուլտետի միջազգայնացման և համագործակցության ընդլայնման ուղղությամբ իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Ապրիլին Հունգարիայի փոխվարչապետ Ժոլտ Շեմյեն, կառավարության արարողակարգի պետը Սանդոր Ույվարին, Հալածված քրիստոնյաների հունգարական աջակցության ծրագրի պետական քարտուղար Տրիստան Ազբեյը, Եկեղեցու և կրոնական դիվանագիտության հարցերով ավագ խորհրդական Բերտալան Քիշը, Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Բալինտ Կովաչը և պատմության ինստիտուտի տնօրեն Սանդոր Ուզեն այցով գտնվել են մանկավարժական համալսարանում, պայմանավորվածություն է ձեռք բերվել Բուդապեշտի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի Հայագիտության ամբիոնի մագիստրատուրայում սովորելու համար հունգարական կառավարությունը հայ ուսանողներին կտրամադրի շուրջ 20 պետական կրթաթոշակ: Այդ կրթաթոշակի շրջանակներում այս տարի պատմության և հասարակագիտության ֆակուլտետի երկու շրջանավարտներ ուսում շարունակում են Բուդապեշտում:
- Սեպտեմբերի 27-հոկտեմբերի 2-ը պաշտոնական այցով ՀՊՄՀ-ում էր Ուրալի դաշնային

համալսարանի պատվիրակությունը: Սեպտեմբերի 29-ին Ուրալի համալսարանի Նոր և նորագույն պատմության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Յուլիյա Զապարիյը հանդես է եկել «Մեծ եռյակը և մեծ հույսերը. ՄԱԿ-ի ստեղծման պատմությունը» թեմայով դասախոսությամբ: Հոկտեմբերի 1-ին նույն համալսարանի Ռուսաստանի պատմության ամբիոնի պրոֆեսոր Վլադիմի Զապարիյը հանդես է եկել «Ռուսաստանի արդյունաբերական ժառանգությունը Ուրալում» թեմայով դասախոսությամբ:

- Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետում կազմակերպվել են հանրային դասախոսություններ արտասահմանյան հանրահռչակ պրոֆեսորների մատուցմամբ.
- Հոկտեմբերի 18-ին Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը ներկայացրել է «Մտորումներ Հայաստանի Առաջին Հանրապետության մասին» դասախոսությունը:
- Հոկտեմբերի 18-ին ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի հայկական բաժնի վարիչ, Կոլումբիայի համալսարանի Մերձավոր Արևելքի, Հարավային Ասիայի և Աֆրիկայի հետազոտությունների բաժնի դասախոս, պրոֆեսոր Խաչիկ Մուրադյանը հանդես է եկել «Վերապրելու պայքարը Մեծ եղեռնի համակենտրոնացման ճամբարներում» դասախոսությամբ:
- Հոկտեմբերի 21-ին Վաշինգտոնի Վիլսոնի կենտրոնի հանրային քաղաքականության փորձագետ, պրոֆեսոր Էմի Առուստին Հոլմսը հանդես է եկել «Թուրք-քրդական հակամարտության փոխակերպումը 2015 թվականից սկսած և դրա ազդեցությունը Հյուսիսային Սիրիայի հայերի և ասորիների վրա» դասախոսությամբ:
- Հոկտեմբերի 25-ին Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի դասախոսներ Բալինտ Կովաչը, Անդրաշ Բոչկոն դասախոսություններով հանդես են եկել ֆակուլտետում:
- Նոյեմբերի 18-ին առցանց հանդիպում է կազմակերպվել Եկատերինբուրգի դաշնային համալսարանի մասնագետների հետ: Որոշվել է ապրիլին կազմակերպել համատեղ գիտական սեմինար: Համաձայնություն է ձեռք բերվել Questio Rossica հանդեսի 2022 թ. համարներից մեկը նվիրել Ռուսաստան-Արևելք հարաբերություններին և մեր ֆակուլտետից մի քանի հոդված տպագրել:
- Դեկտեմբերի 6-10-ը Է. Հովհաննիսյանը, Խ. Ստեփանյանը, Ս. Պողոսյանը Բուդապեշտի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանում դասախոսություններով հանդես են եկել որպես հրավիրյալ դասախոսներ:
- Ֆակուլտետը հայաստանյան չորս համալսարանների և Սլովակիայի Արիբորի

համալսարանի հետ մասնակցում է PROMOEU ծրագրին:

- Խաչատուր Ստեփանյանը սեպտեմբերի 2-3-ին Վարշավայում մասնակցել է Լեհաստանի գիտությունների ակադեմիայի կազմակերպած “Immigrants from the Caucasus in Europe. Between a Vision of Freedom and Alienation” խորագրով գիտաժողովին:
- Հոկտեմբերի 8-ին Խաչատուր Ստեփանյանը մասնակցել է ՌԴ Պյատիգորսկ քաղաքում Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի կազմակերած “Единство и братство народов кавказа – решающий фактор победы в битве за Кавказ” (к 80-летию начала Великой Отечественной войны 1941-1945 годов) խորագրով գիտական ֆորումին:
- Հոկտեմբերի 29-ին Խաչատուր Ստեփանյանը մասնակցել է ՌԴ Եկատերինբուրգ քաղաքում Ուրալի դաշնային համալսարանի կազմակերպած “People of the Cold War World: Refugees, Émigrés, and Displaced Persons” միջազգային գիտաժողովին:
- Նոյեմբերի 26-ին ֆակուլտետի նախաձեռնությամբ «Լիբանանահայերը և իրենց միջավայրը» թեմայով դասախոսությամբ հանդես է եկել Բեյրութի Հայկազյան հայագիտական համալսարանի պրոֆեսոր Անդրանիկ Դաքեսյանը:
- Նոյեմբերի 26-ին ֆակուլտետի նախաձեռնությամբ ՀՊՄՀ-ի և Բեյրութի Հայկազյան հայագիտական համալսարանի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր:
- Ստեփանյան Խաչատուրը դասախոսություններով հանդես է եկել Եկատերինբուրգի համալսարանում (հոկտեմբերի 28), Լիբանանի Հայկազյան համալսարանում (նոյեմբերի 12), Ժիտոմիրի մանկավարժական համալսարանում (դեկտեմբերի 1):
- Խաչատուր Ստեփանյանը Կիևի Դրագոմանի անվան մանկավարժական համալսարանի “Կլիո աշխարհ” պատմագիտական հանդեսի խմբագրական խորհրդի անդամ է:
- Մարգարյան Գոռը միջազգային գիտաժողովների է մասնակցել Թիֆլիսում և Վարշավայում:
- Աշխատանքներ են իրականացվում հարաբերություններ հաստատելու Կարլի (Չեխիա) համալսարանի հայագիտության ամբիոնի հետ և Հունաստանի Ազգային համալսարանի Թուրքագիտության ֆակուլտետի հետ: Այդ ուղղությամբ կան արդեն նախնական պայմանավորվածություններ:
- 2022 թ. աշնանը նախատեսվում է համատեղ միջազգային գիտաժողով Կորունայի համալսարանի հետ, որի արդյունքները տպագրվելու են Եվրոպական ուսումնասիրությունների հանդեսում:
- 2022 թ. աշնանը նախատեսվում է համատեղ միջազգային գիտաժողով Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հետ՝ նվիրված Զմյուռնիայի կոտորածի 100-ամյակին:

X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

| Ներկայացնել և վերլուծել ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետությունը: |
|---|
| Ֆակուլտետի որակի ապահովումն իրականացվել է դեկանատի և ամբիոնների կողմից:<br><br>Հաշվետու տարվա ընթացքում նախապես հաստատված գրաֆիկի համաձայն կազմակերպվել են դասալսումներ, որի ընթացքում վեր են հանվել մի շարք խնդիրներ դասավանդման որակի, մեթոդիկայի, առարկայական նկարագրերի և դասավանդվող նյութի համապատասխանելիության վերաբերյալ: Հաշվետու տարում թարմացվել են ֆակուլտետում դասավանդվող առարկայական նկարագրերն ու տրհումները՝ դրանք համապատասխանեցնելով նոր ուսումնական պլաններին և Բլյում տաքսոնոմիայի սկզբունքներին:<br><br>Դասալսումների արդյունքների հիման վրա կազմակերպվել են քննարկումներ, որին մասնակցել են նաև պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները, տրվել են հանձնարարականներ որակի հետագա բարելավման ուղղությամբ:<br><br>Ֆակուլտետի ներքին որակի ապահովման ուղղությամբ ֆակուլտետը մշտապես համագործակցել է համալսարանի Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի հետ:<br><br>Որակի ապահովման ուղղությամբ ամբիոնների կողմից հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել է մշտադիտարկում Այդ ուղղությամբ ֆակուլտետում որակի ապահովման հարցում կարևոր դերակատարում ունի googleclassroom հարթակը:<br><br>Ֆակուլտետի որակի հետ կապված խնդիրները պարբերաբար քննարկվել է ֆակուլտետի խորհրդի նիստերի ընթացքում: |
| Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը: |
| Ֆակուլտետի որակի ապահովման աշխատանքներում ընդգրկված են եղել համալսարանի համապատասխան ստորաբաժանումները, մասնավորապես Կրթության որակի ապահովման և կառավարման բաժինը: |